14 նոյեմբերի 2019 թվականի N 1599 - Ա

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 29-Ի N 1368-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

---

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի նոյեմբերի 29-ի «Գերակա ոլորտում իրականացվող ներդրումային ծրագրի շրջանակներում ներմուծված (ներմուծվող) տեխնոլոգիական սարքավորումները, դրանց բաղկացուցիչ ու համալրող մասերը, հումքը և (կամ) նյութերը ներմուծման մաքսատուրքից ազատելու արտոնությունից օգտվելու համար «ԱՐԹԻԿԻ ՓՀԿ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից ներկայացված հայտը բավարարելու և արտոնությունը կիրառելու մասին» N 1368-Ա որոշման հավելվածում կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունը՝

1) հավելվածը 6-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 7-9-րդ կետերով՝

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| «7. | 6310900000 | Լաթեր օգտագործված կամ նոր | Տեքստիլ և տրիկոտաժե արտադրության թափոն, լաթեր | կգ | 5 400 000 000 | Թուրքիա, Թուրքմենիա, Ուզբեկստան, Բանգլադեշ, Պակիստան | 1 300 000 000 |
| 8. | 5601219000 | Բամբակ, մանածագործական նյութերից պատրաստված արտադրանք | Մանածագործական վատաներ, կարճ բամբակյա մանրաթել | կգ | 5 400 000 000 | Թուրքիա, Թուրքմենիա, Ուզբեկստան, Բանգլադեշ, Պակիստան | 2 500 000 000 |
| 9. | 4822100000 | Թելի փաթաթման թղթյա կոն | Թղթյա բոբիններ | կգ | 90 000 | Թուրքիա, Թուրքմենիա, Չինաստան | 160 000 000». |

2) հավելվածի «ԸՆԴԱՄԵՆԸ» պարբերության մեջ «920 414 000» թիվը փոխարինել «4 880 414 000» թվով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2019 թ. նոյեմբերի 18
Երևան